

Հայտարարություն

Լոռու մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու մասին

Լոռու մարզպետարանը հայտարարում է **մրցույթ՝ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 95-1.5-Մ5-1)** քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար:

Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 95-1.5-Մ5-1)

1. մասնակցում է պետական առողջապահական ծրագրերի իրականացման աշխատանքներին,
2. մասնակցում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առաջնային /ամբուլատոր-պոլիկլինիկական/ բուժօգնության իրականացման աշխատանքներին, առողջության առաջնային պահպանման օղակում բուժօգնության որակի, համակարգի ներդրման աշխատանքներին.
3. մասնակցում է հակահամաճարակային և կարանտինային միջոցառումներին, սանիտարահիգիենիկ միջոցառումների վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման աշխատանքներին.
4. մասնակցում է տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական ծրագրերի աշխատանքներին.
5. մասնակցում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի իրականացմանը, համապատասխան զորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց բժշկական զննման, լաբորատոր-ախտորոշիչ և հիվանդանոցային հետազոտության ու բուժման կազմակերպման աշխատանքներին.
6. մասնակցում է ծննդօգնության, երեխայի առողջության պետական հավաստագրերի, անաշխատունակության և պետական պատվերի ուղեգրերի տրման գործընթացի կազմակերպմանը, դեղերի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման, բաշխման, պահպանման և հաշվառման աշխատանքներին:

Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 95-1.5-Մ5-1) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ է.

-բարձրագույն կրթություն.

-Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առողջապահության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

-սույն պաշտոնի հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն

-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

-անհրաժեշտ կոմպետենցիաների տիրապետում

Վերը նշված պաշտոնը կարող է զբաղեցվել՝ տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները:

Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է:

Հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել իր լիազորությունների իրականացմանը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Լոռու Մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

-գրավոր դիմում (լրացվում է տեղում)

-կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները,
-աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում), կամ համապատասխան տեղեկանք
-արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային
տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ
համապատասխան տեղեկանք
-մեկ գունավոր լուսանկար՝ 3X4 սմ չափսի
-անձնագրի պատճենը

Պայմանագրի գործողության ժամկետն է՝ մինչև ժամանակավոր թափուր պաշտոնի հիմքի
վերացումը՝ 23.09.2023թ.

Աշխատավարձի չափը՝ 129634 ՀՀ դրամ

**Աշխատանքը իրականացվելու է ՀՀ Լոռու մարզպետարանում՝ ք.Վանաձոր Հայքի
հրապարակ 1**

**Փաստաթղթերն ընդունվում են՝ 2021թ-ի օգոստոսի 19-ից ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև
12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:**

**Ընտրություն կատարելու եղանակը՝ դիմում ներկայացրած քաղաքացիների
փաստաթղթերի ուսումնասիրություն:**

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմում ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու
համար կարող եք դիմել ՀՀ Լոռու մարզպետարան (ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, հեռ.2-10-24,
էլ. հասցե՝ lori.andznakazm@mta.gov.am)

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2021թ-ի օգոստոսի 24-ը ժամը 12.30-ը: